ցին. և երկու հարուստ հանքեր գտնելով, որոնց դեռ եւրոպական անյագուրդ ագահութիւնը ձեռք չէր դպցուցած, սկսան դուրս հանել այդ անգին նիւթերը: Բայց վայրենիները կրկնապատիկ շատնալով և աւելի աղէկ զէնքերով պատսպարուած՝ նորէն վրանին յարձակեցան, և իրեն մարդիկներէն իել մը հոգի սպաննելով՝ զինքն ալ ողջ ձեռք ձգեցին: Երկնային վրէժխնդիր բարկութիւնը յայտնի տեսնուեցաւ իր վրան. և կարծես թէ այն բարբարոսները մակաբերեցին որ Ենրիքոյին մատնութեան ու արեանը պարտաւորն էր. և անոր համար շատ բարբարոս, անգութ և սոսկալի տանջանքներով սպաննեցին, և անողորմաբար պատառ պատառ ընելով կերան: Ո՛հ, ինչու այս սոսկալի տեսարանիս հանդիսատես ու վկայ չեղան այն ամէնքը, որոնց համար նենգութիւնը խաղալիկ մըն է, և ապերախտութիւնը կատակ:

Թարգմանեաց 'ի Ֆռանսէ
Գ. Հ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՔ

Որովայնն ուտելով կը յագենայ,
Աչքը տեսնելով կ'անօթենայ.
Եթէ կ'ուզես յագեցընել որովայնդ, կե՛ր.
Իսկ եթէ աչքդ կշտացընել, մի՛ հետաքրքրիր:

Ծովէն ելած ձուկը և տուն եկած հիւրը երեք օրէն կը հոտին:

Երեք տեսակ են մարդուս թշնամիները. առաջին՝ յայտնի թշնամի, երկրորդ՝ գաղտնի թշնամի. և երրորդ, որ ամէնէն գէշն է, բարեկեդ ուղող թշնամի:

Առջի երկուքէն կը զգուշանանք, որ խայթելով կը ցաւցընեն. իսկ այս երրորդը կը սիրենք, որ շոյելով կը մեռցընէ:

Առջիններուն ով ըլլալնին յայտնի է. երրորդն ով կը ճանչնայ. ամէն մարդուն իր անձն է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Եւրոպայի բնական և հետաքրքրական գիտելիքները: (Տես երես 219)

Երբոր Սաւոյայ Սպիտակ Լեռնէն, որ Ալպեան գօտիներուն բարձրագոյն գագաթն է, դէպ 'ի Միջերկրական ծովը աչքդ դարձընելու ըլլաս, կը տեսնես բաժնուած Տոֆինէի Ալպեան գօտիները կամ Իզէռի բաժնին, ետքը Բարձր ու Ստորին Ալպեայք ըսուած գաւառներուն գօտիները, անկէց վար Ծովեզերեայ Ալպեանց գօտիքը, որ դէպ Իտալիա կ'երկըննան. անկից անդին դեռ կը շարունակեն և կը կոչուին Ապենեանց լերինք:

Մոզլիւզ գաւառին սահմանագլխոյն վրայ է Մանդու լեռը՝ բարձր 6,798 ոտք, ութ ամիս ծածկուած աչք խտտղեցընող ձեան վերարկուով մը: Բարձր-Ալպեանց սահմանին գագաթներուն վրայ Պրիանսոն ամուր քաղաքը կայ, որ Գաղղիոյ քաղաքներուն մէջ ամենէն բարձրն է. բերդը քաղքէն հարիւր եօթանասուն ոտք խորութեամբ դարաւանդով մը բաժնուած է, որուն խորը Տիւռանս գետը կը խոխոջայ. այն ահաւոր անդունդին վրայ զարմանալի ճարտարութեամբ մէկ կամարով կամուրջ մը ձգեցին, որուն աղեղին երկայնութիւնը հարիւր քսան ոտք է:

Գրեթէ փարսախ մը Կապէն հեռու՝ որ Բարձր-Ալպեանց գլխաւոր տեղն է, Բելոդիէ լիճը կայ, որն որ գաւառին ամենէն աղուոր տեսարանն է. հոս ամէն ճամբորդներ կը հանդըպին, անոր երերուն դաշտը տեսնելու համար, որն որ մէկ տատանեալ կղզի մըն է՝ ձևացած հետզհետէ լցուելով եղէգներու, շուշաններու և ուրիշ լճային տնկերու փտութիւններով, որուն երեսը ծածկուած է հիմա կանաչ դալարի մարգով, զորն որ ամէն տարի կը հնձեն: